

թալֆ , որ Կնդղիայի Տէրպի դքսութեանը մէջ ծնաւ . աս մարդս իր աշխատանքովը կ'ապրէր , և մօտ տեղերուն ձամբաները սորվելով՝ կառավարութիւն կ'ընէր , ու իր կառքը ապահով կերպով քաղքէ քաղաք կը տանէր կը բերէր . մութ գիշերներն ալ շատ անգամ տեղացւոց ձամբայ կը ցուցընէր . ասիկայ 1837ն մեռաւ 60 տարեկան Կէկուսթա քաղաքը :

Ո ինտիփրէչ անունով՝ ի ծնէ կոյրը պզտիկուց սորվեցաւ ոստայնանկութեան արհեստը , ետքը սկսաւ գիրք տպելու ծախել : Լրբոր մեռաւ՝ մէկ գրքատուն մը ունէր , որ մէջը 30,000 հատոր գիրք կար , բոլորն ալ գեղեցիկ ու սակաւագիւտ տապագրութիւններ : Խիստ աղէկ երաժշտութիւններ : Խիստ աղէկ երաժշտութիւններ :

Կոյրեր եղան որ գեղարուեստից մէջ ալ մեծ անուն հանեցին . և ոմանք ինչուան գաճէ՝ արձաններ շինելու հետ եղան : Ո եննայի թագաւորական թանգարանին մէջ գաճէ շինած Լէոփոլտ կայսեր կիսարձանը կայ որ ան քաղքին կոյրերէն մէկն է շինած : Լրեւելի եղաւ նաև Յովհաննէս Լրնելլի իտալացին , որ 20 տարեկան եղած ատենը կուրնալով մնացած բոլոր կեանքը արձաններ շինելու անցուց , և իր շինած արձանները ինչուան հիմա յարգի են :

Ինչուան աս տարիներս Կափոլիի կուրանոցին մէջ երկու զարմանալի կոյրեր կային . մէկը Լէսար Վոլաշիովաննի կ'ըսուի որ արոյրի թելերով այլևայլ մեքենաներ շինեց կոյրերուն համար . և հիմա մաթէմաթիքա կը սորվի . մէկան ալ կ'ըսուի Պօղոս Լքոփփա , որ աղէկ ոտանաւորներ կը շինէ յանպատրաստից , ու բնազանցութեան մէջ ալ շատ երեւելի եղաւ :

Կ մեր յիշած կոյրերը գրեթէ մէյմէկ հրաշալիք են . որովհետեւ ասոնք այնպիսի մարդիկ եղան որ իրենց զօրաւոր խելքով՝ իրենց զգայարանաց պակսութեանը յաղթեցին . բայց ընդհանրապէս կոյրերուն կը թութիւն :

օգտակար ընելու համար՝ պէտք է զանոնք այնպէս կրթել որ իրենց պիտոյքը կարենան հոգալ . նույնք ու բարոյական սկզբունքներ սորվեցընելքիչ մը երաժշտութիւն՝ որ զիրենք զուարձացընէ ու միխթարէ , և մէկ յարմար արհեստ մը՝ որով կարենան ստակ վաստըկիլ , ինչպէս են ընդհանրապէս որ և իցէ ձեռագործներ :

### ԱԶԳԱՑԻՆ ՀԱՆԴԻՍ

Հանձար և բարէ հայուստանէաց :

Բ

Ո 2 ինչ նուազ յիմաստասիրական և յարուեստագանուց՝ յաջողագոյն յարդարեաց հանձար զազցս մեր և ի վայելուչ մարդավարութեան , ի բազմայեղանակ ոգի աշխարհաշխնութեան և ի իորին քաղաքագիտութեան : Եւ զիարդ արդեօք : Քանզի և կանխագոյն ժամանակաւքան զայլ ազցս ընտելացաւ մերն ի քաղաքավարութիւն , սնեալ և վարժեալ նախ առ ոսս աստուածատես նահապէտաց , և ապա վերստին առ նոսա դիմեալ յետ կործանման անօրէն տոբարտակին . ոչ ստացաւ զվայրավատին կենաց զվարս , և ոչ կարօտացաւ որպէս զայլ յազցաց ի ձեռն Որինայ ուրուսն թողով զնոդոնեան մայրիս և զգազանուս պուրակս , և ընդ յարկաւ մտանել : Այլ իրբ նախահայրին մեր և դիւցազանց նախատիպն տապաստ արկ վիռովիչս մարդկունք՝ ի գերեզմանս անդր , և տարեալ եհան զնոդովուրդ իւր ի կայս խաղաղական կենաց , այնուհետեւ նահապէտաց ընտանեկան կենցաղ սերտ փոխանցեալ ի նոսա , մինչեւ ցայօր ըստ վկայութեան ամենայն արդի ձանապարհորդաց , Լամարթինայ , Վամպայ , Փուժուլայ և այլց՝ անազարտ պահի ի նոսա . և մանաւանդ որբ յասիական կողմանս ընակեն տակաւին տանուառեարք բազումք հայրագութ իշխանք են տոհմին իւրեանց , ծերք՝ քահանայք , և ասանտիկնայք նոցին և գտտելք՝ Սառայի և Ռեբեկայ հարազատք : Ըստ այսմ օրինակի խնամ կալան հայկազունք մեր՝ զիշանականն ընդ ընտանեկան կենաց Ծորդել տարազ , և այնու քաղաքավարեալ ոչ սակաւ ժամանակ՝ բարեմյոյն և անվրդով բարուց ըղձակերտ եղեւ հանձար ազցին , սիրով երկրագործութեան և արուեստից : Պաշտպանողական ընտրեաց օրէնս քաղաքականութեան հանգոյն Եղիպտացւոց , և ոչ ասպատակող որպէս զՊարսն և զբազում յարեւելայց . վահան զուսով սիրէր ոդին հայաստանի հսկել զահմանք աշխարհին իւրոյ , քան սուսերամերկ խաղալ յօտարին կալուածս : Բայց ոչ կարէր և զարիական նահատակու-

թեամբքն ապախտ առնել . առ որ հզօր զօրութիւն մտայն , և կորով անձին , և առաւել քան զայն՝ անհրաժեշտ հարկ պաշտպանութեան հայրենեաց և գրգռութիւն օտարաց յորդորէին զնա : Բաղդ անակնկալ . առաջին խակ յաղթութեան դրոշք յերկի անդ մերում կանդնեցան . և յետ այնորիկ Արամ և Տիգրան և Արշակունիք մեր մինչև ցՏրդատ , զօրութեամբ և փառօք ոչ ինչ կրտսեր գտանքան զհոյակապ աշխարհակալ Ափիոյ , և արդարութեամբն թերևս առաւելեալ զնո . քօք . որք զբաղմահնարն զԵլլադա նուաճեցին , ընդ դոռին Հռովմայ ի պայքար մտին , ՊՓարսիկն վանեցին , ամենայն հիւսիսականաց յաղթականք եղեն , և զամենայն աշխարհս հնոյն Ափիոյ հարկատում՝ գերիս և գաղթականս արարին : Որովք արդարանայ վկայութիւն մերոյ խորենացոյն , թէ Արազում գործք արութեան գտանին եղեալ և ի մերում աշխարհիս » . և հրաւեկը Երեմիայի առ այրարատեան փարազունս ընդգէմ ատելեաց Տեառն . և գաջնակցութիւն արտաքին քաջաց ընդ Պարուրայ , ընդ Տիգրանայ , ընդ Զարմայրայ , այլրովք հանդերձ . և բողոք զօրավորաց հզօրաց՝ որպիսի ոք էին Կրասոս , Անտոնիոս և Յուլիանոս , որք զՀայովքն արկանեն զպարտութեան իւրեանց զլնաս , այնու զի չեկին նոքա ի թիկունս իւրեանց . որպէս և զինի յորժամ Ցոյնք և Պարսկ ի մարտ կապաւէին , ոչ համարձակէին ձեռներէց լինել ի վերայ իրերաց՝ մինչեւ զհայս յինքեանս ձգեալ , կամ յերկոցուն ևս ձեռնատուութէ ազատ կացուցեալ զնոսա : Զոր և գեղեցիկ յանդիմաննեաց նոցա մերս Վասակ Մամիկոնեան , թէ զգեզ զկըր կին հզօր լերինսդ ես բարձրացուցանէի և խոնարհ առնէլ մերձ ընդ մերձ , կրիսեալ ոտիւք իմուլք զմինդ կամ զմիւսդ :

Առ այս և ի պաշտպանութիւն հայրենեաց և ընիկ տերանց , յորում ոմանց ստգաւեալ է զՀայս (և թերևս ոչ անպատճառ) , բազմապատիկ առաքինութիւն ցուցեալ է մերոցն յաւուրց վեհին Հայկայ մինչեւ ցաւուրս Թորոսինաց և Լեւոնինաց , և մօտագոյն ևս յաւուրս քաջացն որ ի Սիւնիս և ի Ծահկերա ընդգէմ գոռ բռնաւորաց նահատակեալք : Ո՛չ , մի բնաւ . ցորչափ կանգուն կանդիւնք վիպասանից , մի մոռասցին բնաւ և առաքինազարդ անուանք Վահէի և Նդուարդայ , քաջին Վաղարշայ և որդւոյն և թոռին , Վարդանայ և Վահանայ՝ համօրէն տամբին Մամիկոնենիւ . և քոյդ մանաւանդ , Վահանքաջ , իննանամեայ ընդ Պարսս մարտուցելոյդ , և Նեստորիդ զօրավարաց մերոց Մոռչեղայ՝ որ գոչէիր առ որդինքո . «Այս հարիւր և քսան ամէ է , որ ես պատերազմ եմ մլեւալ , և ալքով եմ սրբեալ զարին ի Ճակատէս փոխանակ քրտանց . ութսուն և երեք ուազմ անձամբ իմով կարգեցին : Եւ քոյդ , ովք քաջ , զորմէ բռւզանդ ասէր , թէ ո՛չ մոռոյր բնաւ ամեննեին և ոչ քան զիորի մի գետին ի սահմանաց երկրին Հայոց ուրեք վտարելու . այլ և Մանուկիդ որ ըստ նորուն վիպատիք , աքան գցրամ խայծ ողջ մասն ոչ ունէր ի մարմին . համակընդելուզեալ պատուական սպեօք : Եւ դու պատանեակդ արժանի հօր այնպիսւոյ , ընդ նմին յաւերժասցիս և դու Արտաւազդ : . . .

Բայց ի կարգի քաղաքական օրինաց մեզս համարիմ անյիշտառակ թողուլ և զօրէնս նախարա-

րուեն . որով միապետութիւն աշխարհիս ընդ ազնուապետութեան հազորդեալ , և իբրու հակա կշիռ իմն լինէր լծոցն որ զաշխարհն բառնային . և կրկին աշխարհաշինութեան լինէր պատճառք . մի իրաւանց թագաւորին պաշտպան գոլովնոցա առ ի զիւրեանցն անխախտ պահել պայազատութիւն , և միւ իւրաքանչիւր վիճակացն բարգաւաճութեան միտ գնելով : Վասն որոյ թէ և զեղծմունք ինչ սպրդեալ եղեն յօրէնս անդ նախարարութեանց , մի տարօրինակ ինչ յոյժ ումեք թուեացին , և մի կնիք դաստակարտութեան ի վերայ ածցէ նոցա , իբրու զի երբեմն սեպհական պայազատութեամբն յօրացեալ , և երբեմն առ շահամիութեան , կամ առ անկասկածութեան ի վերայ առանձին բաժնիցն , անփոյթք եղեն ընկերաց կամ հասարակաց ալիտին : Յաւուրցն Յաղերատի մինչեւ ցայսօր ժամանեցուն վայեալ է տիրասէր ոգի Հայաստանեայց , և ամենեցին գիտեն զանձնանուելու նոցա նահատակութիւնս ի վերայ Պարսից և Յունաց , Օսմանեանց , Իուստաց , Լեհաց , Հնդկաց և այլոց . և զի ընդ օտարու այսպէս քաղաքալարէին , յայտ ուրեմն է և ի սկզբանէ լեալ նոցա տիրասէրս բնիկ տերանցն :

Իսկ ի կենցաղօդուա օրէնս և ի մեծագործութիւն՝ յառաջադիմութիւնս այնպիսիս ցուցին նախնիք մեր , որոց յեա երկուց հազարաց ամաց հազիւ նմանող եղեն Եւրոպացիք : Ոչ ինչ ընդ հատ յԵդիպտացւոց բարեզգարդ կարգացն եդան և ի Հայս ամենապատիկ օրէնք ի Վաղարշակայ . շինութիւն և երկրագործութիւն առ հասարակածաւեալ կալան զերկիրս Հայոց . արձանօք և նշանօք սահմանք աշխարհիս լարաբաժին եղեն . ուահէր յարդարունք գործեցան աղբունական պողոսայից , և գրունք ելից կանգնեցան իւրաքանչիւր գանգակաց և վիճակաց . և սահմանեալ թիւք զնից և աւանաւորաց և որդինք Եւրոպաց պատահնէքն եւրոպեան կալան Եւրոպացին կամ ամանամարդ է ստանալ . Հայք ըստ նոցին Եւրոպաց վկայութեան (մանաւանդ Պարաթթայի) որ անկարօս զնոսա սասաց Մաքքիսաւելլեայ) յոլովից աղքաց թուին գերազանցք . և բազրումք ի կիրթ Ճանապարհորդաց և յիմաստնոց արանց Եւրոպայ՝ պատահէալ Հայոց անուսից այլ զգաստից , յապուշ կրթին , լուեալ ի նոցանէ խորդէտ տեսութիւն զպետուեց Եւրոպայ . «Զոր և ոչ առ քաջմն յԵւրոպացւոց գուեալ էր իմ՝ ասէ Լամարթին : Այսու խորատես հանձարով երբեմն ի ծուփս աշխարհին Ափիոյ յոտին ունէին Հայք զպետութիւն իւրեանց ։ այնու գիտացին զգարս երկայնութուպարհ զաղցն ի ծոյ Հռովմայէցւոց , Պարսից և Յունաց . նովին գարձեալ և աղառք ոմանք գալիթեալ յօտարութիւն գործակալք և իսրահակակիցք լինէին իշխանացն Հնդկաց . նովաւ և այժմ թարգմանք և պաշտօնեայք անուանիք լինին արևելեան բգեշիցից , և յաճախ յանձանձիչք ծանր ծանր պաշտամանց պետութեանն , ոչ յԱմիա միայն , այլ և յեւրոպական աշխարհս :

Եւ որ առաւելն է քան զսյս . յարուեստի անդ քաղաքագիտութեան , զոր այժմ Եւրոպ վերագասկ քան զամենայն հնարս Ճարտարմութեան , զոր և ոչ այնչափ ուսմանք՝ որչափ բնաստուր հանձարով մարթ է ստանալ . Հայք ըստ նոցին Եւրոպաց պատահն է ստանալ . Հայք ըստ նոցին Եւրոպաց վկայութեան (մանաւանդ Պարաթթայի) որ անկարօս զնոսա սասաց Մաքքիսաւելլեայ) յոլովից աղքաց թուին գերազանցք . և բազրումք ի կիրթ Ճանապարհորդաց և յիմաստնոց արանց Եւրոպայ՝ պատահնէքն Եւրոպաց պատահնէքն ի ծուփս աշխարհին Ափիոյ յոտին ունէին Հայք զպետութիւն իւրեանց ։ այնու գիտացին զգարս երկայնութուպարհ զաղցն ի ծոյ Հռովմայէցւոց , Պարսից և Յունաց . նովին գարձեալ և աղառք ոմանք գալիթեալ յօտարութիւն գործակալք և իսրահակակիցք լինէին իշխանացն Հնդկաց . նովաւ և այժմ թարգմանք և պաշտօնեայք անուանիք լինին արևելեան բգեշիցից , և յաճախ յանձանձիչք ծանր ծանր պաշտամանց պետութեանն , ոչ յԱմիա միայն , այլ և յեւրոպական աշխարհս :

Զայս նրբին քաղաքատեսութիւն անմարթ էր ունել Հայոց՝ առանց խորագէտ հանձարոյ և նախատեսութեան, մատաւրական չափոյ և թուոյ, յորս դարձեալ յոյժ աջողս լինել վկային և յշւրոպացոց։ Եւ պանչելի այս է, զի խորագէտք՝ այլ ոչ խորամանկը երեխն, անկեղծք՝ այլ ոչ անձնամատն տիմարդք։ այլ իբրու թէ ոչ այլ ոք իբրև զնոսա քաջ գիտից ընդ ճարտարմութեան ընդորել զպարզութիւն։ Այս ահա, ո՛ իմաս անսախումք ժողով, այս ըստ իս՝ առաջն և սեպ հական կնիք է հայկական հանձարոյն։ չափաւորութիւն յամենայնի, ձիք և արուեստ շնաշ խարհիկ։ Քանզի զօրութեամք մտացն թէ ոչ յամենայնի քան զբնաւութերազանց, սակայն և ոչ քան զդք յետնեալ, ընդ միջնն միշտ ընթանայ ազգս մեր ընդ կուռ շաւիդ։ և նովին իսկ կալել ունի այժմուս զքքնազն և զանհաղորդ հանդիպութիւն յաշնարհիք։ զայն զիտապ մտաց արեւելց և արեւատեայց։ Զմոյն վեհափառ հնութիւն զուարթացուցանէ միւսոյն աշխոյժ երիտասարդութեամք։ ընդ ասիտական ծանրութեան զեւրոպեան գիւրամատոյցն ընտանութիւն յինիքն բերէ։ և յայն սակս ամենայն ազինք գովեն զինւրնկալութիւն նոցա։ Հայն միայն է որ գիտաց ՚ի վերայ եւրոպացի հիման ասիտական ամբառնալ տաճար։ նա միայն ընդ արաբացի և պարսիկ հանձարոյ՝ զերկնաձեմն գիտաց լծել զալենեան ոդի հեզաշունչ Այս ազգմիայն է որ ՚ի սկզբանէ մինչեւ ցայսօր ՚ի չորից հազարաց ամաց հետեւ բարեմոյն վարս կենաց ստացեալ է։ այս ազգ է որ զբանչելի չափաւորութեան իւրոյ տարադ յամենայն տեղիս ցուցանէ, լուրջ գողովորպէս զօմանեանն, աշխոյժ որպէս զՊարսն, սակաւապէտ որպէս զՀրեայն, նրբամիտ որպէս զՅոյն, կրնասէր որպէս զՄապանիացի, ժիր և հաւատարիմ որպէս զՀելլեափացի, ժուժկալ և մաքուր որպէս զՀումանացի, մոտահարուաստ իբր զԳերմանացին, զուարթամիտ իբր զԳաղղիացին, հզօր ՚ի կարծիս որպէս զԼեհն, խորագէտ որպէս զԼուսիտանացին, վաճառական որպէս զՄոդիացին, յածողազէն ուղղութեանց ժամանել։ Բայց ՚ի մերում այս ինչ զարմանալի, զի զՀզօր զօրութիւն հանձարոյն՝ որ բազում անգամ նովին թափով ընթանայ զհետ բարւոյն և չարի, սանձիւ չափաւորութեան գիտացին, և չափաւոր որպէս զՎենետիկեցին, և չափաւոր զարդարն Հայ։

Այս մի ոք կարծիցէ այսքանեօք բարեմասնութեամք անթերի իմ գտնեալ իմ զազգս մեր ցուցանել։ զի թէ մարդ ոք մարդ չիք կատարեալ ՚ի վերայ երկրի, զիարդ համորէն ազգի միում ՚ի լիութիւն ուղղութեանց ժամանել։ Բայց ՚ի մերում այս ինչ զարմանալի, զի զՀզօր զօրութիւն հանձարոյն՝ որ բազում անգամ նովին թափով ընթանայ զհետ բարւոյն և չարի, սանձիւ չափաւորութեան գիտացին, յատէտ առ լան ուղղել։ որով այս ինչ յայտ գայ, զի զՀզօր զօրութիւնն սակայն նուազեն բնիկ թերութիւնք ազգին։ և ոք ենն հանձարոյն մասն չեն, զորմէ բուռն հարեալս եմ ճապոել։ զի հանձար ՚ի բարձրելոյն բղիւէ։ Վասն որոյ ժամ է արդ մինչեւ գլխաւորեալ զբանս՝ զայն տեսանել սակաւուք ըստ գեղեցիկ սովորութեան իմաստամիրաց, թէ որով ճանապարհաւ կամ օժանդակ հնարինք՝ այսքանք և այսպիսի պարզեք չնորհեցան հայկական հանձարոյ։

Ցետ անքնին վերնախնամ տեսչութենն Աստուծոյ՝ որ ըստ իւրումն իմաստութեան գիտէ մատա-

կարարել զիրս ՚ի բանական արարածս, զանազանութեան բարուց և հանձարոյ նոցին առաջն պատճառս գանեմ զբնութիւն ծննդեան տեղեաց, և վկազմութիւն արտապին մարդոյն։ Քանզի ըստ առ ՚ի վաղնջուց խորազնին տեսութեան մեծին հիպոկրատեայ և ըստ արգեաց բնախօսից՝ բնութիւն և հանգամնեմք երկրի սատար մեծ ընծայեն առանձինն ախպատ տալս արգեաց բնախօսից՝ ընծայութիւն և հանգամնեմք երկրի սատար մեծ ընծայութիւն մարդկան։ Օրինակ իմն, ճախճախուած վայրի բնախացն գիլին և գանդաղամած ունել բնոյթ, ընանյունոցն վայրագասունս լինել, անտառայնոցն խոզը և արուորագոյնս, որով և անապատաբնակ Արաբացւոյն՝ անդլակի թափառել ՚ի լայնածաւալ աւազոյն ասպարէզ։ Ըստ այսմ և աշխարհիս Հայոց օգոց յստակութեամբ, բարգաւաճագոյն բուսաբերութեամբ, ջրոց ականակիտ յորդախազացութեամբ, հովասուն ըլլովք և երկնաձեմ հասական բարձր ՚ի գլուխ պանծաց ցելց, ՚ի դէպ և ՚ի ճահ էր (որպէս և էն իսկ) կազմել զբնական լըամիտս, հանձարեղս և բարեյօդս մարմնով։ Հանձար, ասէ Պլուտապրոս, պաղոյ ՚նման է, լաւութիւն և քաջաւուղութիւն կլիմային։ ՚ առատագոյն զայն գործելով։ Զուգատիպ իմն և չափ շարամանութեան բնական գրից աշխարհին մերոյ, լերանցն և գետոց, լճաց և հովտաց, և նկարապաճյան բուսականացն գաշտաձն և բարձրգիտակ ծաւալմոնք, թուին ընծայել ափորժակաց ազգիս զբարեխապանութիւնն իբրև յամենայնի։ Բարեկլաւութեան օգոց և վայրաց Հայստանի վկայեն ամենայն ճանապարհորդք։ ՚նոյն պէս և վասն գեղեցկակապ և կորովի կազմութեան մարմնոց մինչեւ ասել ումեմն յարդեացս առն նշանաւորի, թէ և Աբր ըստ իրանացն զըմբշաց բերեն զիերապարսն, և ՚ի կանայունոցին տեսի շնորհ հազարդ գծադիրս գիմանց որպիսի ոչ ՚ի Լա ՚ տիտոն, ոչ յելլագու և ոչ առ մեզ երեկք երկե ՚ ցան։

Երկրորդ պատճառս ընդելական և լուսաւոր հանձարոյ հայաստան ազգիս գիտեմ զաստուածպաշտութեան կրօնս։ որ ոչ միայն հոգւոյս, այլ և մարմնական կենացն երջանկութեան օժանդակ մեծ է յերկրի։ Ծնդ դրամատիկ սպանչելի հրաշիքն ՚ի սպառ ընդ քաղցր լծով հաւատաց ՚նազանգեցց զազցս մեր։ որպէս զի և յըկնիմն յետ ժամանակացն պայծառութեան տռաւել քան զհազար ամ հալածանս կրեալ ազգիս յայլադեն աղանց արևելցից, զըրիստոնէական վայելցութիւնն ոչ կորոյս, և ՚նովին անազարտ պահեաց և զյաջողութիւնն յարուեստս, յուսմունս և ՚ի բարձրոյն քաղաքավարութեան, զոր կրնք ընդ սրբազն հովանասորութեամբ իւրեանց պահելին։ . . . .

Եւ արդ եթէ այսպանեօք ձրիւք Ճոփացեալ տեսանի հայկեան հանձար (զոր աւազ զի միայն տկարութիւն բանիցս յետնեալ ՚ի յօժարութենէ սրտիս՝ ոչ բաւեաց արժանապէտ արտայայաել), որ թէ պէտ և ոչ գլխովին որպէս երբեմն փայլիցի, այլ ըստ մատին իբրև զպազպաշուն ոսկի ընդ հոգով մասցեալ կայցէ ժամանակի և զգոյշ ձեռուաց զտե-

լոյ . Եթէ քաջախոհից արանց և 'ի մենջ և յայլաղ՝ դեաց՝ մերկապարանոց կայցէ այս ամենայն , ով է որ յաւակնոտ բերանով իշխէ արհամարհով լինել այսպիսուոյ ազին . և չերկնչցի՞ , չածիցէ ակն , չկայցէ պատկառ արդարադատն կտտամբանաց հայրենասէր անձանց , և հոգւոյն հայրենեաց , և բովանդակ մարդկան սեռիս , որում չեք ինչ նող կալ քան զմարդ ազգուրաց և հայրենատեաց . կարծիցէ նա Ճողովրել զանձն յերկնառաք յանիժին . «Վայ այնոցիկ գոչէ , որք ասիցեն ցհայր » իւրեանց թէ ընդէր ծնար զիս , և ցմայր՝ թէ ընդ . « Եր երկնեցեր զիս . և ոչ գիտէ զի հայրենիք ծնող են և ծնողաց ծնողք , և հայաստան աշխարհ հայրենեաց հայրենիք են մեր , և առաջին հանդիսարան անմահից և մահացուաց : Հրէշ անհետեգ քան զհայրենատեաց մարդուրեք երկեալ ոչէ . մերկ և կողովուա յարդարութենէ և յուղիղ դատմանէ մտաց և յիրաւացի փառասիրութենէ . ինքնակատ գերի մոլար կարծեաց՝ որ զաւան 'ի դալուկն հարեալ դաշխահար տեսանէ և զամենայն որ յազին իւրում . բաժանեալ յիւրմէ արմատոյն , և ոչ յայլում պատուաստ , իբրու խորւ հողմավար յանփառունակ կայս անկեալ դանդաշէ . յառաջ քան զմահն յիշտատ նորա թաղեալ է , և քաղցրախառն արտասուք հայրենեաց ոչ քաւեսցեն երբէք զանուն նորա :

Իսկ հայրենասէրն , ո առաքինի ունկնդիրք իւմ , անկեղծ հայրենասէրն՝ յանմահութիւն ճակատադրեալ է . որ ընդ մեծի վիպադրին « Հանուրց հիւսիսականաց վեհագոյն » ճանաչէ զաշխարհ իւր . որ ընդ սքանչելոյն կորեան « Երանելի և յանկալի , ասէ , աշխարհս հայոց » . որ ընդ Գրիգորի Տղայոյ համարձակի աղաղակել , « Հայ » եմ Ճմարիս և աներկայս . նա և աստուածայ նոցն և ընկերութեան հրամանաց և անձին և հայրենի փառաց՝ պատկառ կայ . զուարթագին ակամի հայի 'ի պարծանուն նախնեաց և 'ի յոյս ապագայիցն , և ջանիւ վաստակի յօգուա նոցին . 'ի յաղողութեան և յաղէտա ազգին՝ միօրինակ կանգուն կայ սիրտնորա : Ցորչափ հանճար՝ հոգի է հայրենեաց , յոյս՝ միրտ նորա և ջան և աւիւն կենդանական , միիթարեացի 'ի վերայ ազգին : Եթէ ընդ օտար աստեղը սահեալ իցէ նժգեհութեամբ , աչք նորա ստէպ գառնան յայն կորմն՝ ուստի արեգակն ելանէ , և զողոյն հայրենեացն հարցանէ տարադէմ ուղերաց . . . Յերկիր անհարազատ հասանիցէ նմա մեռանել , այլ յիշտատիօք և սիրով ոլանյ անդ առնուլ զքունն յաւիտենից՝ ուր ննջեն զնինջ վեհաղանց հայկն և Տիգրան և Տրդատ , Գրիգորեանք և Ներսիսեանք , Սահակ , Մեսրոպ և Մովսէս : . . Ո՛հ , աճիւն իսկնչխարաց նորին՝ արծարծեալ հայրենի սիրոյն բոցով՝ թռչի որպէս զՅակոբուն և գՅովսեփայ յերկիրն աւետեաց , կամ որպէս զՄողոնին 'ի գաշտ Սաղամինայ , խաղաղել 'ի ձորն հայոց , և 'ի խորհրդազգեաց ստուերս հովանաւոր ծառոցն Արտազու : — Ոգին հայրենի , հօրամշն անձինք , յետագայ իմաստունք նուիրական արտասուք պատուեն զյամբան նորա

և զյիշտատակ՝ ցորչափ անուն ազգին լիցի ընդ անուանս ազանց երկրի : . . .

Եւ ձեզ , ով որդիք Արամայ , յորոց բարախէ տակաւին 'ի սիրոս ազգասիրութեան և ընկերութեան զարկ , որոց քաղցր է զհայրենասիրի ժառանգել յազգիր զանուն . ճանապարհ մի դիւրին կայ ձեզ 'ի փառս . անխոտոր նմանողութիւն պանձալ արդարաց հանճարոյ հարցն ձերոց . յանխոնջ ժրութեան , 'ի նախատես զգուշութեան , 'ի մտառու ուսումնասիրութեան , 'ի պատես իմացութիւնս հաշուոյ և վաճառականութեան , 'ի ճարտար արուեստարկութեան , 'ի զուարթամիտ առատութեան յօգուտ ընկերաց , յանխարդան աչալ յուղութեան տիրասէր , յանակնառու և յուղատես ոդի կրօնասէր , 'ի ձեռն տուութիւն համաշխարհական . . . չինաւուրցն Ամիա սիրով զձեզ 'ի ծոց իւր գգուուէ , Եւրոպէ ընդ հանճար ձեր բարեյացն պիտրացեալ կայ . և եթէ էր երբէք գէպ ժամանակ հանդիսացուցանել զհանճարդ հայրենի առաջի ամենայն աշխարհի , այս է աւասիկ : Ոգին հայաստանի հրաման տայ ձեզ զգաստու և զուարթունս լինել . և համօրէն ազինք որ արդ նախանձնդդէմք 'ի յառաջադէմ անդր նկրտին ընթանալ , հարկ իմն և ձեզ առնեն նշանաւորս հանդիսանալ բարեմասնութեամբք հանճարոյ . անհնար է նմին անտես մնալ եթէ գոյ 'ի ձեզ ջան :

Եւ դուք , քաղցր ակնկալիք մեր , Մանկունք լանասէրք , վառեցարուք առաքինեացն օրինակաւ , զոր և աստէն անտիւնդ տեսանէք 'ի գէմն և 'ի միրտ և յոդի վեմական կաճառոյս , որ ընդ բովանդակն հայաստան յածեալ աշք մտայ զմիրալիր յուասոյն ակնարկիս գառնայ արդ 'ի ձեզ կառուցանել :

## Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

Սովորաբար մէր ԵՇԻՒՇԸՆԿԵԼՈՎ ոչ միայն մեր գել հասկնանք , հապա նաև մեր քաղաքը , դաւուը կամ տէրութիւնը : Բայց կրնայ ըլլալ որ մէկը իր երկիրը սիրէ առանց իր հայնիւնիւն սիրելու . կրնայ ըլլալ որ սիրէ ան նիւթական տէղն ու բնակարանը ուր որ աշխարհք եկեր ու մեծցեր է , առանց սիրելու ան իրաւունքներն ու պարտքելը որով մարդուա հայրենիքը կը ձևանայ : Ամէն մարդ երկիր մը ունի որ իմ ԵՇԻՒՇԸՆԿԵԼՈՎ բայց որչափ մարդ կայ որ հայրենիք չունի . որչափ մարդ ակայ որ կարծէ թէ ունի , և սակայն չունի : Երկիրը կրնայ ըլլալ որ աւելի պակաս գեղեցիկ ըլլայ . իսկ հայրենիքը միշտ սիրելի է ան մարդուն որ գիտէ թէ հայրենիք ունի :